**Արձանագրություն N 3**

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԾՁԲ-15/9-05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «30» սեպտեմբերի 2016թ.
ժամը՝ 14:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Սարգիս Արմենակյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

**Խորեն Պետրոսյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) ՀՀ դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է՝*

**Կարեն Համբարձումյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

**1. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«Բեռնային ուղի» ՍՊԸ-ի, Ա/Ձ Անուշ Պետրոսյանի, «ՍԵԳ» ՍՊԸ-ի, Ա/Ձ Գրիգոր Այվազյանի, Ա/Ձ Գալուստ Աղումյանի, «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի, «ԱՅ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**2. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

2.1 «Բևեռային ուղի» ՍՊԸ-ի, Ա/Ձ Գրիգոր Այվազյանի, Ա/Ձ Գալուստ Աղումյանի կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

2.2 Ա/Ձ Անուշ Պետրոսյանի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ ներկայացված հայտում արձանագրվել է անհամապատասխանություն 4-րդ չափաբաժնի մասով գնի առաջարկին կից ներկայացված գնացուցակի և գնային առաջարկի միջև:

2.3 «ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

ա) <<Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին մասնակցելու դիմում>>-ում (Հավելված 1) <<7.5 կետի 1-ին ենթակետով>> բառերի փոխարեն պետք է լինեն <<7.5 կետի 2-րդ ենթակետով>> բառերը,

բ) <<Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը>> (Հավելված 3.1) թերի է կազմված:

2.4 «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝

ա) <<Մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը>> (Հավելված 3.1) թերի է կազմված, ինչպես նաև ներկայացված հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) ընդհանուր արժեքը պակաս է իր կողմից ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից,

բ) ներկայացված լիազորագրում նշված է այլ ընթացակարգի ծածկագիր:

2.5 «ԱՅ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ ներկայացված հայտը հաստատված է լիազորված անձի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, սակայն ներկայացված չէ համապատասխան լիազորագիրը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

3. Մասնակիցների առաջարկած գներն են՝

| Հ/Հ | Չափաբաժնի անվանումը | «Բևեռային ուղի» ՍՊԸ | | | Ա/Ձ Անուշ Պետրոսյան | | | «ՍԵԳ» ՍՊԸ | | | Ա/Ձ Գրիգոր Այվազյան | | | Ա/Ձ Գալուստ Աղումյան | | | «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ | | | «ԱՅ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ | Առաջարկված գինը /առանց ԱԱՀ/ | ԱԱՀ | Առաջարկված գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | **Քարթրիջների թիցավորում՝ առանց տոների, ներառյալ պահեստամասերը** /ծառայության մատուցումը՝ Երևան քաղաքում/ | 1 890 000 | 378 000 | 2 268 000 | 2 100 000 | | 2 100 000 | 3 780 000 | | 3 780 000 | | | | | | | 3 307 500 | 661 500 | 3 969 000 | | | |
| 2 | **Քարթրիջների թիցավորում՝ առանց տոների, ներառյալ պահեստամասերը** /ծառայության մատուցումը՝ Երևան քաղաքում/ | 225 000 | 45 000 | 270 000 | 360 000 | | 360 000 | 504 000 | | 504 000 | | | | | | | | | | | | |
| 3 | **Պատճենահանող և բազմաֆունկցիոնալ սարքերի վերանորոգում, ներառյալ պահեստամասերը** /ծառայության մատուցումը՝ Երևան քաղաքում/ | | | | 1 160 000 | | 1 160 000 | 1 920 000 | | 1 920 000 | 800 000 | | 800 000 | | | | | | | | | |
| 4 | **Համակարգիչների վերանորոգում** /ծառայության մատուցումը Երևան քաղաքում | | | | 1 606 500 | | 1 606 500 | 616 100 | | 616 100* | | | | 1 926 220 | | 1 926 220 | | | | 281 900 | | 281 900 |
| 5 | **Օդորակիչների վերանորոգում** /ծառայության մատուցումը Երևան քաղաքում/ | | | | 900 500 | | 900 500 | 1 699 000 | | 1 699 000* | 274 000 | | 274 000 | | | | | | | | | |

***«ՍԵԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնի առաջարկում (Հավելված 4) 4-րդ և 5-րդ չափաբաժինների մասով առկա են թվաբանական անճշտություններ: Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով՝ հանձնաժողովը որոշեց մերժել «ՍԵԳ» ՍՊԸ-ի 4-րդ և 5-րդ չափաբաժինների գնի առաջարկը:**

Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:

**Հանձնաժողովը որոշեց.**

-հիմք ընդունելով Կարգի 45-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և հաջորդ նիստը հրավիրել 2016թ. հոկտեմբերի 04-ին, ժամը 11:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովի քարտուղարին.**

Հայտերում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանությունների մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Կարեն Մելքոնյան

Անդամներ՝

Սարգիս Արմենակյան

Արթուր Թամրազյան

Խորեն Պետրոսյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան